DIMENSION
INVESTMENTS

Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ
Իրավաբանական անձի համար

1. Կանոնադրություն կամ այլ հիմնադիր փաստաթուղթ,
2. Պետական գրանցումը հավաստող փաստաթուղթ,
3. Հարկ վճարողի հաշվառման համար կամ այլ համարժեք համարը հավաստող փաստաթուղթ,
4. Առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթուղթ (տրված այդ պաշտոնատար անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից)
5. Իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի.
    - անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի (կամ սոցիալական քարտի) կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենները՝ **ֆիզիկական անձի դեպքում**,
    - գրանցումը հավաստող փաստաթղթի, կանոնադրության կամ այլ հիմնադիր փաստաթղթի, առանց լիազորագրի գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի (տրված այդ պաշտոնատար անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից), այդ անձանց անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի (կամ սոցիալական քարտի) կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենները՝ **իրավաբանական անձի դեպքում,**
6. Լիազորագրի (նոտարական վավերացմամբ) հիման վրա գործող անձի դեպքում՝ լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը, լիազորված անձի՝ 5-րդ կետում նշված փաստաթղթերը,
7. Հաճախորդի թողարկած բաժնային արժեթղթերի քսան և ավելի տոկոսին տիրապետող անձանց ցանկը,
8. Հայտարարություն իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ,
9. Իրական շահառուի՝
    - Անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

- Անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում գրանցման համարը և ՀՎՀՀ-ն կամ համարժեք այլ համարները ներառող փաստաթղթ(եր)ի պատճեն(ներ)ը,
- Գրություն բնակության և հաշվառման վայրի մասին, եթե դրանք նշված չեն ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
- Գրություն կենսական շահերի կենտրոնի մասին, եթե իրական շահառուն օտարերկրյա անձ է և կենսական շահերի կենտրոնը նշված չէ ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
- Տեղեկատվություն քաղաքական ազդեցություն ունեցող անձ լինելու վերաբերյալ,
- **FATCA, ձև W-9 (ներկայացվում է ԱՄՆ հաշվետիրոջ դեպքում)**

10. Լրացուցիչ տեղեկություններ.
    - բանկային հաշվի համարը և սպասարկող բանկի վավերապայմանները,
    - Կապի միջոցներ (գործունեության հասցե, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ՝ առկայության դեպքում),
    - Ընկերության գործունեության տեսակը,
    - Կենսական շահերի կենտրոնը:

Փաստաթղթերը ներկայացվում են նոտարական կարգով հայերեն թարգմանված կամ ապոստիլ արված: